

Գևորգ Իսրայելյան

ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրոյի քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ, Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլ. հասցե՝ gevorg.israyelyan@eiu.am

DOI: 10.53614/18294952-2025.1-8

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍԻ ԱՌԱՆՁԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՈՐՈՇ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայտնի է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործող օրենսգիրքը չի արտահայտում ներկայիս իրողությունը, չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության իրավական համակարգին: Ուստի, ակնբախ է նոր օրենսգրքի ընդունման անհրաժեշտությունը: Ժամանակի ընթացքում մշակվել են նախագծեր, որոնցից վերջինը Արդարադատության նախարարության հեղինակածն էր: Հեղինակն ուսումնասիրության առարկա է դարձրել այդ նախագծի ընդհանուր մասի դրույթները և հանգել այն եզրակացության, որ առանձին ինստիտուտների կարգավորումներ խնդրահարույց են: Խոսքը, մասնավորապես, այնպիսի ինստիտուտների նախագծային կարգավորումների թերությունների մասին է, ինչպիսիք են անհրաժեշտ պաշտպանությունը, վարչական պատասխանատվությունից ազատելը, վարչական տույժերը և դրանց նշանակումը:

Կատարած հետազոտության արդյունքում հեղինակը ձևակերպել է առաջարկություններ, որոնք հնարավորություն կընձեռեն հետագայում կարգավորումներ կատարելիս խուսափել ի հայտ բերված խնդիրներից:

Հիմնաբառեր. նախագիծ, օրենսգիրք, անհրաժեշտ պաշտպանություն, վարչական պատասխանատվությունից ազատելը:

Ներածություն

Գաղտնիք չէ, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործող օրենսգիրքն ընդունվել է դեռևս 1985 թվականին: Բնականաբար, այն չի արտահայտում ներկայիս իրողությունը, չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության իրավական համակարգին՝ չնայած կատարված բազմաթիվ փոփոխություններին և լրացումներին: Ուստի, ակնհայտ է նոր օրենքի ընդունման անհրաժեշտությունը: Իհարկե, ժամանակի ընթացքում մշակվել են տարբեր նախագծեր, սակայն մինչ այժմ նոր օրենսգիրք չի ընդունվել:

Նախագծերից վերջինը հեղինակել էր Արդարադատության նախարարությունը: Սույն հետազոտության նպատակն է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նշված նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդհանուր մասի դրույթների ուսումնասիրությունը և խնդրահարույց կարգավորումների բացահայտումը, իսկ խնդիրը՝ առաջարկությունների ներկայացումը, որոնք հնարավորություն կընձեռեն հետագայում խուսափել խնդրահարույց կարգավորումներից:

Մեթոդը

Հետազոտության մեթոդաբանական հիմքն են կազմել վերլուծության, ձևական-իրավական, համակարգային-կառուցվածքային և տրամաբանական մեթոդները:

Նախագծի ընդհանուր մասի առանձին ինստիտուտների կարգավորումների որոշ խնդրահարույց հարցեր

Մեր կողմից կատարված հետազոտության արդյունքները հնարավորություն են ընձեռել վեր հանել Նախագծի ընդհանուր մասի կարգավորումների մի քանի խնդրահարույց հարցեր.

1. Նախագծի 25-րդ հոդվածը կարգավորում է անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտը:

Հայտնի է, որ անհրաժեշտ պաշտպանության էությունը պաշտպանվողի կամ մեկ այլ անձի իրավունքները, ազատությունները, օրինական շահերը, հասարակության կամ պետության օրինական շահերը հակաիրավական ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից՝ ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելն է (Кононкова, Залунина, 2018, էջեր 32-33):

Նախագծի 25-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է անհրաժեշտ պաշտպանության հասկացությունը՝ գրեթե նույնությամբ կրկնօրինակելով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասի կանոնակարգումը: Նախագիծը սահմանում է. «Վարչական պատասխանատ-

վության ենթակա չէ այն անձը, ով արարքը կատարել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում, այսինքն՝ պաշտպանվողի կամ մեկ այլ անձի կյանքը, առողջությունը, իրավունքները, ազատությունները, օրինական շահերը, հասարակության կամ պետության օրինական շահերը հակաիրավական ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից՝ ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելիս, եթե թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում: (...)»:

Հարց է առաջանում, թե ոտնձգություն կատարողին ինչպիսի՞ վնաս պատճառելու մասին է խոսքը: Օրինակ՝ կարող է խոսք լինել արդյոք ոտնձգողին կյանքից զրկելու մասին: Եթե այո, ապա նման հարթությունում իրավաչափության պայմանները խախտելու դեպքերը տեղափոխվում են քրեաիրավական դաշտ: Ուստի նշված պարագայում քրեական իրավունքի հետ հարաբերակցության հարցը շատ նուրբ է, սահմանազատումը՝ խնդրահարույց: Պատահական չէ, որ Ռուսաստանի Դաշնության օրենսդիր մարմինը խուսափել է վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտ նախատեսելուց՝ ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու հնարավորությունն ամրագրելով միայն քրեական օրենսգրքով (հոդված 37):

Նշվածից տրամաբանորեն բխող հաջորդ հարցը անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման դեպքում պատասխանատվության խնդիրն է: Նախագծի 35-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ կատարված արարքը վարչական իրավախախտում է, եթե նախատեսված է օրենսգրքի հատուկ մասով: Սակայն մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ Նախագծի հատուկ մասի ոչ մի հոդված անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ կատարված որևէ արարքի համար պատասխանատվություն չի սահմանում: Ուստի, ակնբախ է կարգավորման բաց:

2. Նախագծի 35-րդ հոդվածը վարչական պատասխանատվությունից ազատելու հիմքերի թվին է դասում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձին վարչական պատասխանատվությունից ազատելը: Այն, մասնավորապես, սահմանում է. «Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձն ազատվում է այն վարչական իրավախախտման համար վարչական պատասխանատվությունից, որը կատարել է հարկադրաբար՝ իր նկատմամբ իրականացված մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ընթացքում»:

Մեր նախորդ հետազոտություններում հիմնավորել ենք, որ վերոհիշյալ հանգամանքը չի կարող դիտարկվել որպես վարչական պատասխանատվությունից ազատելու հիմք (Исраелян, 2023, էջեր 154-155): Խնդիրն այն է, որ հարկադրաբար արարք կատարելու դեպքում բացակայում է կամային հատկանիշը՝ որպես մեղքի բաղադրիչ: Հետևաբար՝ բացակայում է վարչական իրավախախտումը: Մինչդեռ հայտնի է, որ վարչական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի համար պարտադիր է իրավախախտման առկայությունը (Իսրայելյան, 2022, էջեր 62-63): Իսկ մեղքի բացակայության

դեպքում զանցանքը բացակայում է: Փաստորեն, վերոգրյալ կարգավորման պարագայում վարչական պատասխանատվությունից ազատելու հիմքը նույնացվել է վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանքի հետ, ինչն անթույլատրելի է (Куреева, 2023, էջեր 183–184):

Ուստի, ոչ միայն մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման, այլ ցանկացած իրադրությունում, երբ անձը հարկադրաբար արարք է կատարում, վարչական պատասխանատվությունը (ուստի և դրանից ազատելը) բացառված է: Այդ մասին է վկայում նաև Նախագծի 27-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը, ըստ որի՝ ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ արարքը գիտակցելու կամ ղեկավարել անկարողության դեպքում անձը ենթակա չէ պատասխանատվության: Նախատեսված է բացառություն միայն այն դեպքերի համար, երբ կոնկրետ իրադրությունում անձը կարող էր գիտակցել կամ ղեկավարել իր արարքը: Նման դեպքերում նա ենթակա է վարչական պատասխանատվության անզգուշությամբ վարչական իրավախախտում կատարելու համար, եթե այն նախատեսված է օրենսգրքի հատուկ մասով:

3. Նախագծի 43-րդ հոդվածը, որպես վարչական տույժի տեսակ, նախատեսում է վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավումը: Այսպիսի վարչական տույժ նախատեսված է նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործող օրենսգրքի հոդված 28-ում (գործող օրենքում նման ձևակերպմամբ նախատեսված է նաև մեկ այլ տույժի տեսակ՝ վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկան հատուցմամբ վերցնելը (հոդված 29), որը Նախագծում չի նախատեսվել): Այստեղ խնդրահարույց է «անմիջական օբյեկտ հանդիսացող առարկա կամ գույք» ձևակերպումը: Հայտնի է, որ գործիքը կամ այլ գույքը չի կարող լինել իրավախախտման օբյեկտ: Ցանկացած տեսակի իրավախախտման (զանցանք, հանցանք և այլն) օբյեկտն օրենքով պաշտպանվող հասարակական հարաբերություններն են, որոնց դեմ ուղղվում է խախտումը (Харабада, 2020, էջ 318): Ըստ էության, վերոգրյալ կարգավորումներում խոսք կարող է լինել միայն իրավախախտման առարկայի մասին: Մասնագիտական գրականության մեջ իրավախախտման առարկան բնութագրվում է որպես նյութական աշխարհի իր, որի վրա իրավախախտման կատարման ընթացքում իրականացվում է ներգործություն (Шевченко, էջ 20): Փաստորեն, վերոգրյալ կարգավորումներում նույնացվել են իրավախախտման օբյեկտն ու առարկան, մինչդեռ դրանք տարբեր հասկացություններ են:

4. Նախագծի 50-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է. «վարչական տույժի տեսակը և չափը որոշվում է՝ հաշվի առնելով վարչական իրավախախտման՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, հետևանքները, վարչական պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, վարչական իրավախախտում կատարած անձին բնութագրող տվյալները, գույքային դրությունը»:

Նշված կարգավորման կենսագործումն ապահովող կառուցակարգը հա-

րաբերական որոշակի և երկրնտրելի սանկցիաների նախատեսումն է: Սակայն Նախագծում կան հոդվածներ, որոնց սանկցիաները բացարձակ որոշակի են՝ նախատեսում են տույժի մեկ տեսակ և մեկ չափ: Հարց է առաջանում՝ ինչպե՞ս է հնարավոր նման կարգավորումների դեպքերում տույժ նշանակելիս հաշվի առնել, օրինակ, պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները:

Հետագայում խնդրահարույց կարգավորումներից խուսափելու առաջարկություններ

Հետագայում համապատասխան կարգավորումներ իրականացնելիս, մեր կարծիքով, անհրաժեշտ է.

1. Մանրամասն կանոնակարգել անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտը:

Խնդիրն այն է, որ անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտը բավականին բարդ է: Ուստի անհրաժեշտ է.

1) Ոչ թե նմանօրինակել քրեաիրավական կարգավորումներին, այլ սահմանել ուսնձգություն պատճառողին հասցվող վնասի բնույթը: Կարծում ենք, որ իրավակարգավորում իրականացնելիս անհրաժեշտ է շեշտել, որ ուսնձգություն կատարողին կարող է պատճառվել ցանկացած տեսակի վնաս, բացառությամբ կյանքին և առողջությանը հասցվող վնասից, որը բնորոշ է միայն անհրաժեշտ պաշտպանությանը քրեական իրավունքում:

2) Նախատեսել զանցակազմեր, որոնք պատասխանատվություն կսահմանեն անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման դեպքում: Որպես օրինակ կարող է ծառայել այնպիսի զանցակազմի նախատեսումը, ինչպիսին է գույքը ոչնչացնողին կամ վնասողին անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ գույքային վնաս պատճառելը, որը պաշտպանվողի համար ակնհայտ, համաչափ չէ հակաիրավական ուսնձգության բնույթին և վտանգավորությանը ու չի բխում պաշտպանվելու անհրաժեշտությունից:

2. Որպես վարչական պատասխանատվությունից ազատելու հիմք չնախատեսել մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձին վարչական պատասխանատվությունից ազատելը:

Ինչպես վերը հիմնավորվեց, թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձի կողմից հարկադրաբար արարք կատարելը պատասխանատվությունը բացառող հանգամանք է, այլ ոչ թե պատասխանատվությունից ազատելու տեսակ:

3. Որպես վարչական տույժի տեսակ նախատեսել վարչական իրավախախտմանգործիքի կամ առարկայի բռնագրավումը:

Գործող օրենքում և Նախագծում իրավախախտման օբյեկտը և առարկան նույնացվել են, ինչն անընդունելի է, քանզի դրանք, ինչպես վերը նշվեց, տարբեր հասկացություններ են:

4. Հրաժարվել բացարձակ որոշակի սանկցիաների նախատեսման պրակտիկայից:

Վարչական իրավախախտման՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, հետևանքները, վարչական պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, վարչական իրավախախտում կատարած անձին բնութագրող տվյալները, գույքային դրությունը վարչական տույժ նշանակելիս հնարավոր է հաշվի առնել միայն այն դեպքերում, երբ համապատասխան նորմի սանկցիան հարաբերական որոշակի կամ երկրնորելի է: Նման կարգավորումը հնարավորություն կտա անհատականացնել պատասխանատվությունը:

Եզրակացություն

Մեր կողմից կատարված հետազոտության արդյունքները հանգում են հետևյալին.

1. Նախագծի 25-րդ հոդվածը, կարգավորելով անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտը, անտեսել է ուսնձգություն կատարողին պատժառվող վնասի բնույթի հարցը, ինչպես նաև չի սահմանել այն իրավախախտումների շրջանակը, որոնք կարող են կատարվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ:

2. Նախագծի 35-րդ հոդվածը վարչական պատասխանատվությունից ազատելու հիմքերի թվին է դասել մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձին վարչական պատասխանատվությունից ազատելը: Սակայն իրականում այն վարչական պատասխանատվությունից ազատելու հիմք չէ, քանի որ հարկադրաբար արարք կատարելու դեպքում բացակայում է կամային հատկանիշը՝ որպես մեղքի բաղադրիչ: Ուստի նման դեպքում խոսք կարող է լինել միայն պատասխանատվությունը բացառող հանգամանքի մասին:

3. Նախագծի 43-րդ հոդվածը, որպես վարչական տույժի տեսակ, նախատեսում է վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավումը: Խնդրահարույց է «անմիջական օբյեկտ հանդիսացող առարկա կամ գույք» ձևակերպումը: Հայտնի է, որ առարկան կամ գույքը չի կարող լինել իրավախախտման օբյեկտ: Ուստի խոսք կարող է լինել միայն իրավախախտման առարկայի մասին:

4. Նախագծի 50-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հանգամանքները վարչական տույժ նշանակելիս միշտ չէ, որ հնարավոր է հաշվի առնել, քանզի բացարձակ որոշակի սանկցիաների նախատեսումը խոչընդոտում է դրան:

5. Հետագայում համապատասխան կարգավորումներ իրականացնելիս անհրաժեշտ է.

1) մանրամասն կանոնակարգել անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտը՝ իրավակարգավորում իրականացնելիս շեշտել, որ ուսնձգություն կատարողին կարող է պատժառվել ցանկացած տեսակի վնաս, բացառությամբ կյանքին և առողջությանը հասցվող վնասից, որը բնորոշ է միայն անհրաժեշտ պաշտպանությանը քրեական իրավունքում, ինչպես նաև նախատեսել զանցակազմեր, որոնք պատասխանատվություն կսահմանեն անհրա-

Ժեշտ պաշտպանության սահմանազանցման դեպքում, օրինակ՝ գույքը ոչնչացնողին կամ վնասողին անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ գույքային վնաս պատճառելը,

2) խուսափել վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանքները և վարչական պատասխանատվությունից ազատելը նույնացնելուց, մասնավորապես՝ չնախատեսել մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձին վարչական պատասխանատվությունից ազատելը՝ որպես վարչական պատասխանատվությունից ազատելու հիմք,

3) ձիշտ օգտագործել համապատասխան եզրույթները, մասնավորապես՝ համապատասխան կարգավորումներում «իրավախախտման անմիջական օրյեկտ» արտահայտության փոխարեն օգտագործել «իրավախախտման առարկա» եզրը,

4) հրաժարվել բացարձակ որոշակի սանկցիաների նախատեսման պրակտիկայից, ինչը հնարավորություն կտա հաշվի առնել օրենքով սահմանված համապատասխան հանգամանքները, անհատականացնել պատասխանատվությունը:

Օգտագործված գրականության ցանկ

Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նախագիծ // <https://www.e-draft.am/projects/6259/about> (վերջին մուտք՝ 10.02.2025):

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ընդունվել է 05.05.2021թ.: ՀՕ-199-Ն: Միասնական կայք 2021.05.17-2021.05.30: Պաշտոնական հրապարակման օրը՝ 27.05.2021թ.:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք, ընդունվել է 06.12.1985թ.: ՀՍՍՀ ԳՍՏ 1985/23:

Իսրայելյան Գ.Վ., Վարչական իրավունք (Ընդհանուր դրույթներ): Քրեատոմատիա: Երևան, Հեղ. հրատ., 2022. – 204 էջ:

Кодекс об административных правонарушениях Российской Федерации, принят 30.12.2001г. // https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_34661/ (վերջին մուտք՝ 10.02.2025):

Уголовный кодекс Российской Федерации, принят 13.06.1996г. // https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/ (վերջին մուտք՝ 10.02.2025).

Исраелян Г. О вопросе совершенствования института освобождения от административной ответственности в Республике Армения // ՀՀ սահմանադրական դատարան. Տեղեկագիր. 3(111) 2023, էջեր 149-162:

Кононкова Н.В., Залунина Т.Г. К вопросу о допустимости необходимой обороны при защите от посягательства, имеющего признаки административного правонарушения // Вестник АМГУ. Выпуск 82, 2018. С. 32-36.

Шевченко В.Ю. Объект и предмет преступления // <file:///D:/Users/User/Downloads/obekt-i-predmet-prestupleniya.pdf> (վերջին մուտք՝ 10.02.2025).

Харабара И.В. Объект преступления и его виды // Образование и право. № 6, 2020. С. 318-323.

Геворг Исраелян

*Начальник Научно-исследовательского
центра прикладных проблем криминологии
Национального бюро экспертиз Национальной
академии наук Республики Армения,
преподаватель Международного университета Евразия,
кандидат юридических наук, доцент
Эл. адрес: gevorg.israyelyan@eiu.am*

О НЕКОТОРЫХ ПРОБЛЕМАТИЧНЫХ РЕГЛАМЕНТАЦИЯХ ОТДЕЛЬНЫХ ИНСТИТУТОВ ОБЩЕЙ ЧАСТИ ПРОЕКТА КОДЕКСА ОБ АДМИНИСТРАТИВНЫХ ПРАВОНАРУШЕНИЯХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Статья посвящена изучению регламентаций общей части последнего проекта Кодекса об административных правонарушениях Республики Армения. Результаты исследования автора показывают, что регламентации таких институтов, как необходимая оборона, освобождение от ответственности, взыскания и их назначение, проблематичны. Во-первых, не предусмотрен характер ущерба, причиняемого лицу, посягающему на блага, охраняемые законом, а так же круг деяний, которые могут быть совершены с превышением пределов необходимой обороны. Во-вторых, предусмотрено освобождение от ответственности лица, подвергшегося трафикингу или эксплуатации людей. Анализ данной нормы показывает, что при совершении пострадавшим лицом деяния по принуждению отсутствует волевой признак – как составляющий элемент вины. Следовательно в данном случае мы имеем дело с обстоятельством, исключаящим ответственность. В-третьих, предусмотрена конфискация орудия либо непосредственного объекта административного правонарушения либо имущества, как вид взыскания. Известно, что орудие либо другое имущество не может быть объектом правонарушения, так как объект – это общественные отношения, на которые посягает проступок. Следовательно, в указанной регламентации объект и предмет правонарушения отождествлены. В четвертых, при назначении взыскания не всегда возможно учитывать отягчающие, смягчающие и другие обстоятельства, так как в законопроекте встречаются абсолютно-определенные санкции.

Учитывая вышеуказанные наблюдения, автор представил предложения, которые в будущем помогут решить указанные проблемы регламентирования.

Ключевые слова: проект, кодекс, необходимая оборона, освобождение от административной ответственности.

Gevorg Israyelyan

*Head of the Scientific Research Center of Applied
problems in criminology of*

*National Bureau of Expertises of National Academy of
Sciences of the Republic of Armenia,*

Lecturer of the Law Department at Eurasia International University,

Ph.D. in Law, Associate Professor

Email: gevorg.israyelyan@eiu.am

ON SOME PROBLEMATIC REGULATION OF INDIVIDUAL INSTITUTIONS OF THE GENERAL PART OF THE DRAFT CODE OF ADMINISTRATIVE OFFENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

The article is devoted to the study of the regulations of the general part of the latest draft of the Code of Administrative Offences of the Republic of Armenia. The results of the author's research show that the regulation of institutions such as necessary defense, exemption from responsibility, penalties and their appointments are problematic. Firstly, the nature of the damage caused to an intruder, is not provided for, or is the range of acts that may be committed in excess of the limits of necessary defense. Secondly, provided the exemption from liability of a person who has been trafficked or exploited. An analysis of this rule shows that when a victim commits an act of coercion, there is no volitional element as an integral element of guilt. Therefore, in this case, we are dealing with circumstances that exclude liability. Thirdly, it provides for the confiscation of an instrument or a direct object of an offense or property as a type of penalty. It is known that an instrument or other property cannot be the object of an offense, since the object is a social relationship encroached upon by a misdemeanor. Consequently, in the specified regulation, the object and the subject matter of the offense are identified. Fourthly, when imposing penalties, it is not always possible to take into account aggravating, mitigating and other circumstances, since absolutely determinate sanctions are found in the draft.

Taking into account the above observations, the author presented proposals that will help solve these regulatory problems in the future.

Key words: draft, Code, necessary protection, exemption from administrative responsibility.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2025թ. մայիսի 5-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2025թ. մայիսի 7-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2025թ. հունիսի 11-ին: